ՆՈՐ-ԴԱՐ

№ 60 ԵՐՈՒՐԴ ՏԱՐԻ Հաբաթ 26 Ապրիլի 1886 Հաբաթ 26 Ապրիլի ԵՐՈՒՐԴ ՏԱՐԻ № 60

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. Հասով 5 կապեկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում՝ մխիթարյան խմբագրատունը։

Խմբագրութիւն հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տոն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար՝ կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ա յ ն օ ր դ ը. — Հայաստանեայց ս. եկեղեցին Հնդկաստանում.
Փ ր ա ն կ ո ն. Լուրեր.
Թ ղ թ ա կ ց ու թ իւ ն ն ե ր. — Ս. Փետերբուրգ։
Ք ա ղ ա ք ա կ ա ն. — Հելլադա և Մակեդոնիա։ Լուրեր։
Խ ա ն ո ւ Լ ու ր ե ր։
«Նոր-Դար»-ի հեռագրիները։
Ր ա ն ա ս ի ր ա կ ա ն. — Ինչ լայղ է (շարունակ.)։
Յ ա յ տ ա ր ա ր ու թ իւ ն ն ե ր։

Թիֆլիս, 25 Ապրիլի 1886

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ ՀՆԴԿԱՍՏԱՆՈՒՄ

—

Ամենայն դարձած հին Հայաստանից հայերը հետզհետէ աշխարհիս շուրջը ցրուելով՝ զանազան երկիրներում նշանաւոր գաղթականութիւններ հաստատեցին։ Այդ տեսակ գաղթականութիւններից մէկն էլ Հնդկաստանում հաստատած հայոց նշանաւոր գաղթականութիւնն է։

Հնդկաստանի հայոց և նրանց թողած ու կտակած մեծ հարստութիւնների մասին շատ է գրուել, շատ է կարդացուել և շատ էլ լսուել է։

Հնդկաստանը հայերի վերաբերմամբ այն երկիրն է, որտեղ կենդանի հայերը անյայտ են մընում հայոց ազգին. միմիայն մեռած հայերն են յայտնի։ Սա խորհրդաւոր երեւոյթ է և հասկանալի միանգամայն. գաղթող հայութեան հայրենիքը — գերեզմանատունն է։

Վերջերումս Կիլիկիայից ոմն Մկրտիչ եպիսկոպոսի Կալկաթա իբրև նուիրակ գնալը և անգլիական եկեղեցւոյ ժամասացութեանը հանդիսաւոր կերպով նրա մատնակցութիւնը, առիթ տուեց հեռաստեան հայերին ուշադրութիւն դարձընելու Հնդկաստանի հայերի և նրանց գործերի վերայ։

«Նոր-Դար»-ը վերոյիշեալ Մկրտիչ եպիսկոպոսի սերտագործութեան լուրը հաղորդեց։ Հետզհետէ Թիւրքիայի հայոց մամուլի մէջ էլ եղան այդ մասին տեղեկութիւններ։ Վերջերումս Պօլսի Թերթերից մէկ իմացանք, որ Սսոյ կաթողիկոսը այդ մասին Պօլսի պատրիարքին բացատրութիւն տալով յայտնում է, որ Մկրտիչ եպիսկոպոսի մասին հաղորդածները ուղիղ չեն, որ նա բան չունի արած, այլ միայն իւր փոխ-ոչին վարդապետ է ձեռնադրել և թէ ինքը (Սսոյ կաթողիկոսը) հրամանագրել է, որ Մկրտիչ եպիսկոպոսը Կալկաթայից վերադառնայ Սիս։

Հայաստանեայց եկեղեցւոյ իրաւունքների պաշտպան Պօլսի Ազգային ժողովը Սսոյ կաթողիկոսի այդ բացատրութիւնը լսելով հանդարտուել է։

Ոչ ոք ի հարկէ Սսոյ կաթողիկոսից չէ հարցնում թէ ս. Էջմիածնի իրաւասութեան տակ գտնուող Հնդկաստանի թեմում Սսոյ եպիսկոպոսը որ իրաւունքով կարողանում է իբրև նուիրակ շրջել, և մ՛թէ կարող էր Մկրտիչ եպիսկոպոսը Հնդկաստան գնալ առանց իւր մեծի, կաթողիկոսի գիտութեան։

Այս կէտը մութն է մնում։

Պէտք է իմանալ ընթերցողը, որ Հնդկաստանի հայոց եկեղեցին այսինքն Հնդկահայերը իբրև եկեղեցական համայնք, ստորադրուած են Սպահանում նստող Առաջնորդին, իսկ այս վերջինս, ինչպէս յայտնի է, ս. Էջմիածնի իրաւասութեան տակ է գտնվում։ Այժմ պէտք ասենք, որ Կալկաթայի հայոց եկեղեցին և նրա հետ կապուած բոլոր գործերը այդ եկեղեցւոյ երեցփոխանի կամ, ինչպէս իրենք հնդկահայերը անուանում են, եկեղեցականի ձեռքումն է։

Հնդիկ աշխարհում անգլիական իշխանութեան տակ գոյութիւն ունեցող հայ գաղթականութիւնը միայն կարող է ստեղծել այնպիսի մի երեցփոխանի տիպ, ինչպիսին է այսօր Կալկաթայի հայոց եկեղեցւոյ երեցփոխան ամն Թոմաս Մելքումը։

Այս մարդու զօրութեան մասին գաղափար կազմելու համար բաւական է, որ ասենք թէ Էջմիածնի վեհ. Կաթողիկոսից ուղարկած կոնդակը անգործադիր է թողնում, պահում է իւր մօտ և թոյլ չէ տալիս, որ եկեղեցւոյ մէջ կարդացուի։ Կալկաթայի եկեղեցւոյ ծերունի Յովհաննէս ուաղ քահանան ինչ ինչ ինտրիգների զոհ գնալով բանադրվում է բաւականին տարիներ առաջ հանգուցեալ կաթողիկոսից։ Ահա քանի տարի է, որ ս. Էջմիածինը կոնդակով այդ բանադրութիւնից արձակում է յիշեալ քահանային, բայց Թոմաս Մելքումը ստանալով Սպահանի առաջնորդից արդէն յիշած կոնդակը պահում է իւր մօտ և խեղճ ծերունի քահանան մէկ ոտքը գերեզմանում, չը գիտէ թէ ինչ անէ և ինչպէս ազատուէ Թոմաս Մելքումի ճիրաններից։ Այդ դրութիւնը աւելի ծանր է հայ ծերունի քահանայի համար, որովհետև նա չէ կամենում բանադրուած մնալ գերեզմանն։

Առանց Թոմաս Մելքումի և նրա գիտութեան ոչինչ կարող չէ կատարուիլ Կալկաթայի հայոց եկեղեցում և Սպահանի առաջնորդ Գրիգորիս եպիսկոպոսը դրա հետ համաձայն է և համախոհ։

Այդպէս լինելով, հարկաւոր է իմանալ ընթերցողին Կիլիկիայի Մկրտիչ եպիսկոպոսի վարմունքը Կալկաթայում։ Այդ մասին մանրամասն տեղեկութիւններ է հաղորդել աշխարհին Հնդկաստանի «Ինդիան Զարչմէն» թերթը և այդ թերթից էլ արտատպուել է մի ընդարձակ յօդուած Լօնդօնում հրատարակուող «Զարչ Տայմս», այսինքն «եկեղեցական ժամանակներ» թերթի մի համարում։ Այս վերջին թերթի համարը մեր ձեռքումն էր։ Ի՞նչ ենք իմանում այդ թերթից։

Մեր Մկրտիչ եպիսկոպոսը բարեկամանալով Կալկաթայի անգլիական քահանաների հետ, մի կիւրակէ օր գնում է անգլիական եկեղեցի։ Այդ առթիւ Դալէր տանտէրով անգլիական քահանան խօսում է մի քարոզ։ Բնական առնելով «Հաւատոյ Մխուիթիւնը» կարճ պատմում է (միջանկեալ ասենք բազմաթիւ սխալներով) Հայաստանեայց ս. եկեղեցւոյ պատմութիւնը, հաստատում է, որ Հայաստանեայց եկեղեցին հին է և նման է անգլիական եկեղեցւոյն։ Այդ երկու եկեղեցւոյ միութեան իբրև կենդանի ապացոյց, քարոզիչ քահանան ունկնդիր ժողովրդին մատնացոյց է լինում հայոց Մկրտիչ (արք) եպիսկոպոսի վերայ, որը այդ օրը զգեստաւորուած դուրս է գալիս խորանից, ընկերանում է եկեղեցական թափորին, եկեղեցւոյ մէջ տեղը անցնում, սեղանի առաջ կանգնում և մատնակցում է ծիսակատարութեան։ Քարոզիչ քահանան ջատագովում է Մկրտիչ եպիսկոպոսին և նրա վարմունքը, իսկ մեր հայոց եկեղեցւոյ սպասաւոր Մկրտիչ եպիսկոպոսը ժամասացութենից յետոյ օրհնում է ժողովուրդը և արձակում։

Այդ օրը անգլիական եկեղեցում եղել են և բազմաթիւ հայեր։

Ի՞նչ օրինակ պէտք է առնէ գաղթականութեան մէջ կորստեան մատնուած հայ ժողովուրդը հայ եպիսկոպոսից, քանի որ ինքը արդէն հայերէն լեզուն չէ հասկանում և անգլիերէն է խօսում և դատարկվում, երբ տեսնում է որ իւր եկեղեցւոյ հովիւը օտար եկեղեցւոյ մէջն է...

Արդէն Հնդկաստանի հայ գաղթականութիւնը իւր անկման շրջանումն է։ Այլապէս էլ կարելի չէ սպասել, Հնդկաստանի հայոց գաղթականութիւնը բացառութիւն կարող չէ կազմել գաղթականութեան անողոք օրէնքի առաջ։

Նախ չարչարանքով հայերը գաղթականութիւն են հաստատում, տոկուն աշխատանքով անապատները կանանչ այգիներ են դարձնում, ծաղկում, յառաջանում, հարըստանում են և յետոյ — ընկնում և անհետանում։

Ինչպէս Հնդկաստանի հայոց գաղթականութիւնը, նոյնպէս և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Ի՞ՆՉ ԼԱՅՂ Է*)

(Հայոց կեանքից)

ԺԹ.

Առաւօտը չատ վաղ զարթնցաւ Ամալիան։ Նա մտադիր էր այնպէս չուտ գնալ Պլատոնի մօտ և վերադառնալ, որ ոտն մէջ ոչ ոք չը նկատէր նրա առաւօտեան բացակայութիւնը։ Բայց չը գիտէր թէ ծառան պատրաստ էր իրեն ընկերակցելու թէ ոչ։ Շտապաւ հագնուելով ու լուացուելով նա մօտեցաւ իւր տուալէտին փոքրի չափ պչրուելու համար։ Որքան էլ նրա սիրտը տխուր և վիճակը աննախանձելի էր, այսուամենայնիւ զգեցիկ և գրաւիչ երեւալու ցանկութիւնը երբէք չէր նուազում նրա մէջ։ Մանաւանդ այդ րոպէին նա ցանկանում էր աւելի զգեցիկ և աւելի հրապուրիչ լինել իւր սիրահարին կախարդել կարողանալու համար, բայց ինքն իրեն հաչիւ չէր տալիս թէ այսուհետև էլ ինչին էր հարկաւոր իւր սիրոյն և անձնուիրութեան դաւաճան այդ սիրահարը։

*) Տես «Նոր-Դար» № 59.

Երբ նա դուրս գնաց տան բակը, Բաբօն արդէն կազմ և պատրաստ իր սիրուհու հրամանին, մանավանդ ճեմում էր այնտեղ։ Բայց Պլատոնի մօտ գընալու համար դեռ չատ վաղ էր։ Ամալիան ցանկացաւ օգուտ քաղել ժամանակից և նախապատրաստուել նրա հետ խօսելու համար։ Այդ նպատակաւ նա մտաւ իրենց փոքրիկ այգին։

Օրը ամպամած էր։ արեը դեռ չէր ծագել, բայց արեւելքը վառվում էր պատռոտն լուսով։ Մի քաղցրաժպիտ զեփիւռ փչում էր այգու մէջ։ ճընճղուկները երամով թռչկոտում էին նրա ծառերի վերայ և լցնում օդը իրենց ազմկալից ճռուողիւնով։ Ամառային առաւօտը մի կողմից կազդուրիչ ներգործութիւն ունեցաւ Ամալիայի վերայ, իսկ միւս կողմից տխրեցրեց նրան՝ յիշեցնելով անցեալի քաղցրութիւնները, որոնց նա այժմ վայելել չէր կարող։ Պլատոնի հետ խօսելու նախապատրաստութիւնը մնաց։ Նա յիշեց իւր ծաղկափթիթ մանկութիւնը, որ անցուցել էր այս այգուց մէջ, իւր անմեղ կուսական խաղերը այս ծերացած ծառերի տակ, իւր մանկական հրճուանքը այս ճնճղուկների երգերի համար, և վերջապէս իւր պատանեկական հասակը՝ լի ազատ ու դաղտնի յոյսերով, որոնք, աւաղ, այդ րոպէին արդէն կործանուած էին...

—«Նոյն իսկ մի տարի առաջ որքան ուրախ, որքան անհոգ և որքան բաղատաւոր ճեմում էի ես այս ծառուղի տակ, մտածում էր նա ինքն իրեն. ես հարստ էի իմ հոգեկաւոր զեղեցկութեամբ, իմ իշխանական ծագումովի իմ անբիծ անուամբ, իմ պատուաւոր զարգացմամբ... ինձ համար իսօսում էին ամեն տեղ, ինձմով հիանում էին մարդիկ, ինձ պաշտում էին երիտասարդները... կեանք, սէր և վայելչութիւն. ամեն տեղ ոտատում էին ինձ և միմիայն ինձ... իսկ այսօր, աւաղ, ես կործանուած եմ անկանգնելի կերպով. ինձ այլ ես ոչինչ չէ մնում, բայց միայն նախատինք և անպատուութիւն... և ինչու համար այս բոլորը... Օ՛հ, Պլատոն, Պլատոն, այո դու ես, դու միայն սկիզբն և պատճառ իմ դժբաղտութեան, իմ անկման և կործանման...»։ Եւ թշուառ աղջիկը այլ ևս չը կարողացաւ չարունակել. նա վրթռթռաց գլուխը ևս չդարչի մէջ և չտապով դուրս գնաց այգուց։

—Առաջ անցիր, Բաբօ, ցոյց տուր ինձ այն մարդու բնակարանը, որտոր զած ասաց նրան Ամալիան. բայց գնա այնպիսի ճանապարհներով, որ քաղաքի մարդիկ չը նկատեն։

Բաբօն առաջ անցաւ։ Նա գնում էր հանգիստ քայլերով, առանց չտապելու. որովհետև ծերութիւնը և մանաւանդ երկար տարիների ծառայութիւնը խեղճ Բաբօյի ոտերում էլ ոյժ չէին թողել։ Ամալիան նեղանում էր նրա դանդաղկոտութեան վերայ, բայց ձայն չէր հանում. և այն ոչ թէ նրա համար որ ափնածում էր նրա ծերութիւնից, այլ նրա համար որ կարօտ էր նրա օգնութեան և խորհրդատուութեան։

Բայց չը նայելով որ օրուայ այդ ժամանակը փողոցներում կառք չէ ճարվում, այնուամենայնիւ Բաբոյի բաղդից մի դիպուած առաջ նրանք պատահեցին մի ծածկուած կառքի, որի մէջ քնած էր կառապանը։ Ամալիան հրամայեց Բաբօն զարթնցրեց կառապանին։ Խեղճ մարդը չը գիտէր թէ ինչ պատահմունքով իւր կառքը գտնվում է այդ դիպուածի առաջ։ Նա կամեցաւ մի փոքր մտածել այս գաղտնիքը լուծելու համար, բայց Բաբօն ժամանակ չը տուաւ նրան։—«Դեռ գնանք, մենք չատ ենք. ինչ հարկաւոր է, ճանապարհին կը մտածես» ասաց նա նրան և օգնեց իւր տիրուհուն կառքը նստելու, իսկ ինքը բարձրացաւ կառապանի նստարանի վերայ։

—«Դէհ գնա, բարեկամ, չուտ գնա. —Ասուած քեզ լինի համար հասցրեց, թէ չէ ես ոտքեր չունեի Մասկովսկայա Բալկան հասնելու. սկսաւ մտերմաբար խօսել Բաբօն կառապանի հետ։

—Էդ լաւ բիձա, գնանք, բայց դուն ասա թէ ես ինչ էի չինում այս վոզոցում այսպիսի ժամանակ, պատասխանեց կառապանը ձիաներին մարակելով։

—Ես իսկոյն կիմանամ, բարեկամ։ Ամենից առաջ ինձ ասա տեսնեմ թէ երեկ երեկոյեան վերջին անգամ ո՞ւմ տարիր։

—Երեկ երեկոյեան։

—Չա՛։

—Երեկ երեկոյեան... սպասիր. լաւ չեմ յիշում... բայց չէ հիմա յիշում եմ. երկու լաւ տղաների վերայի քաղցրից բերի Մոխածմինդա. նրանք մի մանկիկ բաշխեցին ինձ. յետոյ երեք աբասի էլ գինու փոխ։ Յետոյ... ո՛ւմ տարի չը գիտեմ... չ՛, չէ, ոչ ոքին չը տարի. ձիանները դրստա քշեցի էս միկիտան Ծղալօրի մօտ։ Նա ոմի քաժակ լաւ կարմիր գինի խմացրեց ինձ, ու ինձանից երկու աբասի առաւ թէ վից չունի չը գիտեմ. յետոյ...

—Էլ ինչ յետոյ յիմար, գինին վերբացաւ կառապանի նստարանի վերայ։

—«Դէհ գնա, բարեկամ, չուտ գնա. —Ասուած քեզ լինի համար հասցրեց, թէ չէ ես ոտքեր չունեի Մասկովսկայա Բալկան հասնելու. սկսաւ մտերմաբար խօսել Բաբօն կառապանի հետ։

—Էդ լաւ բիձա, գնանք, բայց դուն ասա թէ ես ինչ էի չինում այս վոզոցում այսպիսի ժամանակ, պատասխանեց կառապանը ձիաներին մարակելով։

—Ես իսկոյն կիմանամ, բարեկամ։ Ամենից առաջ ինձ ասա տեսնեմ թէ երեկ երեկոյեան վերջին անգամ ո՞ւմ տարիր։

—Երեկ երեկոյեան։

—Չա՛։

—Երեկ երեկոյեան... սպասիր. լաւ չեմ յիշում... բայց չէ հիմա յիշում եմ. երկու լաւ տղաների վերայի քաղցրից բերի Մոխածմինդա. նրանք մի մանկիկ բաշխեցին ինձ. յետոյ երեք աբասի էլ գինու փոխ։ Յետոյ... ո՛ւմ տարի չը գիտեմ... չ՛, չէ, ոչ ոքին չը տարի. ձիանները դրստա քշեցի էս միկիտան Ծղալօրի մօտ։ Նա ոմի քաժակ լաւ կարմիր գինի խմացրեց ինձ, ու ինձանից երկու աբասի առաւ թէ վից չունի չը գիտեմ. յետոյ...

—Էլ ինչ յետոյ յիմար, գինին վեր-

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

«Ազգ»-ով։ Այդ մասին նա հետևյալ տեղեկությունն է տալիս։

Ամեն տարի ես ուղևորվում եմ Ղրիմ, որտեղ ունեմ ամառանոց։ Այս տարի ևս ճանապարհ ընկա Ղրիմ։ Ճանապարհին ինձ հանդիպեցան մի քանի ծանոթներ, որոնք ինձ հարցրին, թե ինչ է կատարվում Ղրիմում։ Ես պատասխանեցի, որ ոչինչ չգիտեմ, որովհետև ոչ մի լուր չեմ ստացել։ Ինձ զարմացրեց այն հանգամանքը, որ ոչ ոք ինձ չհարցրեց, թե ինչ է կատարվում Ղրիմում։ Ես կարծում էի, որ ամբողջ աշխարհը լի է Ղրիմի մասին լուրերով։ Ես կարծում էի, որ ամբողջ աշխարհը հետաքրքրվում

ԳՈՀՈԺՈՆՈԺ

* * *

Վանակի գավառակի Ղազարապատ գյուղում ապրում էր մի հարուստ, բայց ոչ մեծ ընտանիքի տեր։ Ընտանիքի անդամները՝ հայրը, մայրը, մի աղջիկ և մի տղա, ապրում էին միասին, սիրում էին միմյանց և ապրում էին ուրախ ու երջանիկ կյանքով։ Տղան՝ Ավետիսը, 15 տարեկան էր, աղջիկը՝ Մարիամը, 13 տարեկան։ Ավետիսը ուսում էր ստանում գյուղի ծխական դպրոցում, Մարիամը տնային դաստիարակություն էր ստանում։

Ավետիսը ուսման մեջ շատ ջանասեր էր, ուստի ուսուցիչները նրան շատ էին սիրում։ Նա ուսման մեջ միշտ առաջին տեղն էր բռնում։ Ուսուցիչները նրան միշտ գովում էին, ընկերները նրան սիրում էին, ծնողները նրանով հպարտանում էին։

Մի անգամ, երբ Ավետիսը դպրոցից տուն էր գալիս, ճանապարհին մի ծանոթ հարևան հանդիպեց նրան և հարցրեց.

— Ավետիս, ինչպես ես սովորում, լավ ես սովորում, թե վատ։

Ավետիսը պատասխանեց.

— Ես միշտ լավ եմ սովորում, ուսուցիչները ինձանից գոհ են։

Հարևանը ասաց.

— Ուրեմն դու ուսումնասեր տղա ես, ուրեմն դու ուսումնասիրում ես ամեն առարկա։

Ավետիսը պատասխանեց.

— Ես ամեն առարկա չեմ ուսումնասիրում, ես միայն գոհոժոնոժ եմ ուսումնասիրում։

Հարևանը զարմացավ և հարցրեց.

— Ի՞նչ է գոհոժոնոժը, ինչ առարկա է։

Ավետիսը պատասխանեց.

— Գոհոժոնոժը առարկա չէ, գոհոժոնոժը գոհոժոնոժ է։

Հարևանը ավելի զարմացավ և հարցրեց.

— Ինչպե՞ս, ինչպե՞ս է գոհոժոնոժը։

Ավետիսը պատասխանեց.

— Գոհոժոնոժը գոհոժոնոժ է, ես չեմ կարող ավելի պարզ բացատրել։

Հարևանը ասաց.

— Ուրեմն դու ինձ չես ուզում ասել, թե ինչ է գոհոժոնոժը։

Ավետիսը պատասխանեց.

— Ես չեմ կարող ասել, թե ինչ է գոհոժոնոժը, որովհետև գոհոժոնոժը գոհոժոնոժ է

«Nation. Zeit.» լրագրի կարծիքով, Ֆրանսիայի անակընկալ միջամտութիւնը ունէր երկու նպատակ. նախ՝ զարմացնել աչխարհին և ապացուցանել նրան, թէ այն բաները, որոնք դժուար էին եւրոպական դիպլոմատիայի համար, առանց նաւախմբերի նաւացոյցների, հեչա են ֆրանսիական դիպլոմատիայի համար։

Եւ երկրորդ՝ ազատել Յունաստանին Եւրոպայի կամքին հնազանդելու կարևորութիւնից։ Այդ երկու նպատակներից առաջինը ներկայացնում է ոչ այլ ինչ, եթէ ոչ մի թատրոնական էֆէկտ, իսկ ինչ վերաբերում է երկրորդին նրա իրագործուելը հաղիւ թէ օգուտ բերէ երկարատև և հաստատուն խաղաղութիւն ցանկացող պետութիւններին։ Երբ Աթէնքում պատերազմի գործերը անյուսալի դրութեան մէջ համարուեցաւ՝ ի նկատի ունենալով Գերմանիայի, Աւստրիայի, Անգլիայի և Իտալիայի կողմից ցոյց տուած ըստ պատուականքները, այն ժամանակ Ֆրանսիան ասպարէզ դուրս եկաւ և յարմար րոպէ գտնելով իւր փառաց պսակը քաղելու, առաջ մղեց իւր դիպլոմատիան և սկսեց պաշտպանել Յունաստանին։ Որովհետև մինչև այսօր եւրոպական պետութիւնները զերծ են ունեցել ոչ թէ Ֆրանսիայի հետ, այլ Յունաստանի, ուստի պարզ հասկանալի է, որ նրանք իրենց պահանջները կամենում են ստանալ Յունաստանից և ոչ թէ պ. Ֆրեյսինէից, ի հակառակ դէպս իրաւունք կլինեն տուած Ֆրանսիային պաշտպան լինելու Յունաստանին, որը հակառակ է եւրոպական չահերին։

—

Բիւմանական Մանդալայ քաղաքից հեռագիրը հաղորդում է, որ երեք հազար ազատամարտներ, Աբու-Ահմէդի առաջնորդութեամբ դիմում են Կօրօսկոյի և Մանդալայի վերայ։

—

Բերլինից հաղորդում են, որ Բաւարիայի Լիւդովիկոս թագաւորը սաստիկ տանջւում է ջղային հիւանդութեամբ։ Պետական մինիստր բարօն Լիւցը բոլորովին անձնատուր է եղել իշխան Լիւտպօլդին։ Քաղաքական աչխարհում Բաւարիայի վերայ խնամակալութիւն նչանակելը ունենալով պատ իշխան Լիւիտպօլդին, անխուսափելի է համարվում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Indép. Belge» լրագրի տուած տեղեկութեամբ, Մադրիդի եպիսկոպոսը սպանողը բռնուած է բանտում և չարունակում է իրեն պահել նոյն անվրդով և անդորը դրութեան մէջ, ինչպէս էր առաջ։ Բանտում նրան հարկադրեցին աչխատական չորեր հագնել, որի մէջ նա աւելի ահեղ է, քան թէ հոգևորական հանդերձատում։ Գալինային չատ ցածր է խօսում. չը նայելով որ լսկիքից փորը ինչ ակար է և անդադար ման է գալիս իր սենեակում, երբ նա անանում է, որ սկսում են իրա չեւից հանել նա իսկոյն պառկում է անկողնի մէջ և իրեն սուտ քնած է ձևացնում։ Գալիօսի ախորժակը չատ լաւ է։ Երբ նրան հաղորդեցին եպիսկոպոսի մահը՝ նրա դէմքը բոլորովին չը փոխուեցաւ։ Հանգուցեալ եպիսկոպոսի ազգականները և հոգևորականները, որքան աչխատեցին արդելք լինելու և թոյլ չը տալու բանալու հանգուցեալի փորոքիքը և անդամահատութեան ենթարկելու, սակայն չեղաւ, բժիշկները իրենց ասածն արին։ Նրանք երեք վէրքից երկուսը մահառիթ դատեն, որոնցից մինը թոքի մէջ էր, իսկ միւսը մկանունքում։ Ե. պիսկոպոսին կը թաղեն Մադրիդի մայր եկեղեցւոյ դամբարանում։

***

Հրդեհ Մանդալայում։ — «Times» լրագրին հեռագրում են այն սարսափելի հրդեհի մասին, որը ոչընչացրեց մի քանի հարիւր տներ Բիւրմանիայի Մանդալայ քաղաքում։ Քաղաքը վեց տեղից կրակ էր տուած, դրդմամբ Մին-Զայինդի, որը կամենում է ձեռք բերել բիւրմանական գահը։ Արքունիքը ազատուեցաւ հրդեհից, իսկ նրան չրջապատող պատատունը, գանձարանը և ուրիչ չատ արքունի հիմնարկութիւններ, բոլորն էլ մոխիր դարձան։

***

Բիսմարկի ծննդեան օրը։ — Ապրիլի մէկին առաւօտեան կանուխ կայսերական կանցելիարիայի չինութեան մէջ սկսուեցան իրարանցումներ։ Ամեն կողմից սկսկին բերել չնորհաւորական դրութիւններ և ընծաներ։ Գեռ նախընթաց երեկոյեան պատատում տացուեցան մինչև 200 հատ չնորհաւորական նամակներ և հեռագրներ, իսկ ծննդեան օրը մինչև 600 հատ։ Այդտեղ գանվում էին նաև իշխաններին, գանազան ընկերութիւնների և մինչև անդամ ուսանողների կողմից ուղարկած գրութիւններ։ Վերջիններս գրել էին, թէ ներկայ րոպէում նրանք խմում են կանցլերի կենացը գինի և գարեջուր։ Իշխան Բիսմարկը առանձին ընդունելութիւնները սկսեց առաւօտեան ժամի 9-ից։ Ամենից առաջ նրան ներկայացաւ Գրէյֆվալդի հրացանաձիգ գնդի կողմից եկած պատգամաւորութիւնը։ Այդ ընդունելի իշխանը մի տարի կամաւոր պինուր է եղել։ Յետոյ եկան զինուորական երաժիչտները և կանցելիարիայի չինութեան առաջ սկսկին հերթով նուագել գանազան սերենադներ և երգեր։ Յետ այնորիկ եկաւ թագաժառանգը և երկար մնաց իշխանի մօտ։ Երկու և կէս ժամին եկաւ ինքը վ. Լէհդլմ կայսրը։ Իշխանին ընծայ ուղարկած բազմաթիւ ծառերից և ծաղիկներից գահլիճը պարտիզի էր փոխարկուել, իսկ միւս գահլիճը մնդուկների, արկղների և զամբիւղների չատութիւնից պահեստի էր նմանում։ Սեղանները ծածկուած էին գանազան տեսակ կարկանդակներով ու քաղցրաւենիքներով, որոնց ուղարկել էին ոչ միայն կանդիսաներները, այլ նաև մանաւոր գերմանացի կանայք։ Աչխան Բիսմարկին ուղարկել էին լուսանկարներ, նրա մանաւոր և պատմական կեանքի դէպքերից առած բազմաթիւ արձաններ, տեղական և լուսանկար պատկերներ։ Ուղարկած ընծաների մէջ գտնվում է անօթ (վազ) Բիսմարկի թոռների պատկերներով, էմալով զարդարած գանազան տեսակ գրասենեակի իրեղէններ և բազկաթոռ։ Յետ այնորիկ դ